# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 հունիսի 2016 թվականի N50-Ա

### ՍԵՆԻԿ ԳԱՐԵԳԻՆԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԲԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածի առաջին մասի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 19-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ախլաթյանի և Դարբասի համայնքների ղեկավարների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու, համայնքների ղեկավարների արտահերթ ընտրություններ նշանակելու, անցկացնելու և ընտրությունների նախապատրաստման ու անցկացման ծախսերը ֆինանսավորելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի N1555-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N501-Ն որոշման և Սենիկ Գարեգինի Միքայելյանի անձնական դիմումի, որոշում եմ՝

1. Սենիկ Գարեգինի Միքայելյանին 2016 թվականի հունիսի 3-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Դարբաս համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ մինչև արտահերթ ընտրության արդյունքում սահմանված կարգով Դարբաս համայնքի նորընտիր ղեկավարի կողմից իր պարտականությունների ստանձնումը.
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Ս.ԽԱԶԱՍՏՐՅԱՆ

2016թ. հունիսի 2
ք. Կապան